**Մեկնարկեց Եվրոպայի Խորհրդի Քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցի 2013-2014 թվականների ուսումնական տարին**

21.10.2013

 

Երևանի «Մետրոպոլ» հյուրանոցի դահլիճում պաշտոնապես ազդարարվեց Եվրոպայի Խորհրդի Քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցի (ՔԴԵԴ) 2013-2014 թվականների ուսումնական տարվա մեկնարկը: Դպրոցի 9-րդ ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությանը ներկա էին և մասնակիցներին ողջունեցին ՔԴԵԴ տնօրեն Արմեն Զաքարյանը, դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը, Հայաստանում Եվրոպայի Խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ Նաիրա Ավետիսյանը, դպրոցի շրջանավարտներ ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, քաղաքական վերլուծաբան Արտյոմ Երկանյանը: